

«Մարդկային ռեսուրսների կառավարում» մագիստրոսական ծրագիր

Ընդհանուր տեղեկություն

«Մարդկային ռեսուրսների կառավարում» մագիստրոսական նոր կրթական ծրագիրը նպատակաուղղված է աշխատաշուկայում մրցունակ, բարձրորակ մասնագետների պատրաստմանը, որոնք աշխատանքի տեղավորման լայն հնարավորություններ կունենան տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում:

Ծրագրի տևողությունը 1.5 տարի է, դասապրոցները նախատեսվում է իրականացնել շաբաթական երեք անգամ, երեկոյան ժամը 18:00-ից հետո:

Դասավանդման ընթացքում ուսանողները կստանան աշխատաշուկայի պահանջներին համապատասխան գործնական հմտություններ և կարողություններ: Այդ նպատակով մագիստրոսների աշխատանքային փորձառությունը կկազմակերպվի հանրապետության խոշորագույն ընկերություններում: Կրթական ծրագիրը պատրաստվել է՝ հաշվի առնելով միջազգային առաջավոր փորձը: Դասավանդման ընթացքում կիրառվելու են ուսումնասության արդիական մեթոդներ, այդ թվում՝ օրինակների հիման վրա դասավանդում (case study), բանավեճեր (debate), գործարար խաղեր, ուղեղային գրոհներ (brainstorm) և այլն:

Դասավանդողները մարդկային ռեսուրսների կառավարման բնագավառում դասավանդման փորձ ունեցող մասնագետներ են, որոնք վերապատրաստվել և դասավանդել են արտասահմանյան կրթական հաստատություններում, ինչպես նաև համալսարանի գործընկեր խոշոր ընկերությունների ղեկավար կազմի ներկայացուցիչներ:

Ուսման վճարը մեկ տարվա համար 700.000 ՀՀ դրամ է, ամբողջ ծրագրի արժեքը՝ 1 մլն 50 հազ. ՀՀ դրամ:

Շրջանավարտին շնորհվում է կառավարման մագիստրոսի որակավորում:

Մասնագիտության նկարագիրը

«Մարդկային ռեսուրսների կառավարում» մագիստրոսական կրթական ծրագիրն արդիական և պահանջված է ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում: Մարդկային ռեսուրսների կառավարումը կազմակերպության կառավարման համակարգի բաղկացուցիչ մասն է և դրա հիմնական նպատակը տվյալ ընկերության հաջողության ապահովումն է մարդկանց միջոցով: Յուրաքանչյուր ոլորտում աշխատանքի արդյունավետությունը կախված է բարձր կրթական մակարդակ և որակավորում ունեցող անձնակազմի աշխատանքից: Կազմակերպության ռազմավարական նպատակների իրականացման վրա մեծ ազդեցություն ունեն աշխատողների գաղափարները, նրանց աշխատանքային փորձը, մասնագիտական հմտություններն ու կարողությունները:

Ըստ միջազգային փորձագիտական կանխատեսումների՝ մոտակա տասնամյակում մարդկային ռեսուրսների կառավարումը աշխարհում առավել արագ զարգացող մասնագիտացումներից մեկն է լինելու, որի պահանջարկը գերազանցելու է միջին ցուցանիշը: Պատճառն այն է, որ թվայնացման պայմաններում մարդկային ռեսուրսների կառավարման գործառույթներն առավել համալիր են դառնում՝ նպաստելով ընկերությունների մրցունակության ամրապնդմանը և

առաջխաղացմանը: Դա պայմանավորում է այս ոլորտում միջինից բարձր աշխատավարձի սահմանումը:

Տվյալ կրթական ծրագրի շրջանակում սերտ համագործակցություն կիրականացվի մեր երկրի առաջատար ընկերությունների հետ, որոնք իրենց լայն հնարավորությունները կտրամադրեն՝ ուսանողների մասնագիտական փորձառության կազմակերպման և համապատասխան ստորաբաժանումների մասնագետների անմիջական ներգրավման համար: Ընկերությունների ՄՌԿ դեպարտամենտում փորձառություն անցնելը հիանալի հնարավորություն է ՄՌԿ մասնագիտությունը նախընտրած մագիստրանտների համար: Մարդկային ռեսուրսների կառավարում մասնագիտության նպատակն է պատրաստել մասնագետներ, որոնք հաջողությամբ կիրականացնեն մարդկային ռեսուրսների կառավարման բոլոր գործառնությունները ինչպես մասնավոր կազմակերպություններում, այնպես էլ պետական կառավարման մարմիններում: Դա ենթադրում է մասնագիտական խոր գիտելիքների և հմտությունների ձևավորում մարդկային ռեսուրսների միջազգային կառավարման, պլանավորման և համալրման, առաջնորդման, կառավարման հոգեբանության և մոտիվացման, սոցիալական գործընկերության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության, փոփոխությունների և գիտելիքների կառավարման, անձնակազմի խթանման համակարգերի և այլ հիմնահարցերի վերաբերյալ:

«Մարդկային ռեսուրսների կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրի շրջանավարտները կարող են ընդգրկվել կառավարչական, ձեռնարկատիրական, խորհրդատվական, գիտահետազոտական և դասախոսական աշխատանքներում: Նրանք կարող են աշխատել տնտեսության բոլոր ոլորտներում, այդ թվում՝ պետական և մասնավոր հատվածի կազմակերպություններում, միջազգային կազմակերպություններում, խոշոր կորպորացիաներում, փոքր և միջին բիզնեսում:

Ծրագրի շրջանավարտները կարող են աշխատել որպես մարդկային ռեսուրսների կառավարման ստորաբաժանումների ղեկավարներ, տնօրեններ և փոխտնօրեններ, անձնակազմի կառավարման մասնագետներ, մենեջերներ և խորհրդատուներ, աշխատանքային հարաբերությունների կառավարման մենեջերներ, կադրային գործակալներ, աշխատուժի հավաքագրման և ընտրության գծով մասնագետներ, տաղանդների հավաքագրման մասնագետներ, աշխատանքային կարիերայի և կրթության գծով խորհրդատուներ, անձնակազմի վերապատրաստման և զարգացման գծով մասնագետներ, մարդկային ռեսուրսների գծով խորհրդատվական ընկերության ղեկավարներ: